

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԱՅՈ-ՈՉ ՀԱՐՑՄԱՆ ՀՆՉԵՐԱՆՔԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐ

Ս. Վ. ՂՈՒԿԱՅԱՆ

Հարցման համակարգը արևմտահայերենում ունի այնպիսի տեսք, ինչպիսին այն ներկայանում է արևելահայերենում: Արևմտահայերենում նույնպես նախնական կտրվածքում, ըստ հարցական բառի առկայության կամ բացակայության, առանձնացվում է հարցական բառով հարցում և առանց հարցական բառի հարցում: Առաջին խմբում տարբերակվում է միջուկային կամ ինչու-որ հարցում, որը կազմվում է հարցական դերանունների միջոցով (Ինչու՞ մազերդ թաց են) և եղանականիշ կամ միջին հարցում, որը կազմվում է հարցական եղանակավորող բառերի միջոցով (Իրա՞ն դուն նեղված ես անոցմէ): Երկրորդ խմբում տարբերակվում են կապակցային կամ աչո-ոչ հարցում, ընտրանքային կամ քե հարցում, համեմատական կամ քան հարցում, լրացուցիչ կամ իսկ հարցում և կցորդային կամ չէ հարցում:

Ինչպես արդեն երևում է հոգվածի առաջին տողերից, մենք շատ ավելի ամրողական ձևով ուսումնասիրել ենք և դասակարգել արևելահայերենի հարցական նախադասությունները¹: Հայերենի հարցումները շատ ավելի մասնավոր մոտեցմամբ հետազոտված են Հր. Աճառյանի, Մ. Արեղյանի, Վ. Առաքելյանի, Գ. Զահուկյանի և Ս. Աբրահամյանի կողմից²:

Հարցական նախադասությունների հետաքրքիր ուսումնասիրություններ և դասակարգումներ են կատարել Հ. Սուխոբ, Օ. Եսպիրսևեր, Կ. Բրուզմանը, Լ. Տենյերը, Ա. Պեշկովսկին, Վ. Շելյակովան, Յ. Ֆիրբասը, Գ. Արդուկադիրովան և 1970 թվին հրատարակված ուսանելի ակադեմիական քերականության հեղինակները³: Օտար լեզվաբաններից շատ ավելի ամրողական ու ընդգրկուն է Գ. Բոլիգերի ամերիկյան անգլերենի հարցական նախադասությունների դասակարգումը⁴:

Այո-ոչ հարցման ձևական արտահայտման միակ միջոցը հարցական հնչերանգն է: Այն, ըստ խոսողի կողմից իր հարցման պատասխանի ենթադրման աստիճանի, լինում է չեզոք, ենթադրական և հավաստիական: Հարցումը չեզոք է այն ժամանակ, երբ խոսողի վերաբերմունքը սպասվող պատասխանի նկատմամբ չեզոք է: Խոսողը հավասարապես կարող է ստանալ և՛ այո, և՛ ոչ պատասխան (Այս (սա) աղչիլը հավնեցա՞ր): Զեզոք հարցման դեպքում հարցաշեշտը միշտ դրվում է ստորոգյալի վրա: Հարցումը ենթադրական է, երբ խոսողը ինչ-որ շահով ենթադրում է իր հարցման պատասխանը (Դպրոցե՞ն կուզաս): Ենթադրական հարցման ժամանակ հարցաշեշտը կարող է դրվել ստորոգյալից բացի ցանկացած այլ անդամի վրա: Այս

¹ Ս. Ղուկայան, Ժամանակակից հայերենի հարցատեսակները, «Լեզվի և ոճի հարցեր», Երևան, 1978:

² Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի (մեքենագիր օրինակ), հ. 7, էջ 369—374, Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 553—557, Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Երևան, 1958, հ. 1, էջ 14—21, Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 359—366, Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:

³ H. Sweet, A New English grammar. Part 1, Oxford, 1930, pp. 172—176; O. Jespersen, The Philosophy of grammar. London, 1951, pp. 302—305; Essentials of English grammar, 1946, pp. 304—307; A modern English grammar, part 3, London, 1949, pp. 39—42; B. A. Пешковский, Интонация и грамматика. Избранные труды, М., 1959, с. 181; B. E. Шевякова, Интонация вопросительного предложения в современном английском языке, канд. дис., М., 1954; Я. Фирбас, Функции вопроса в процессе коммуникации. ВЯ, № 2, 1972, с. 55—65.

⁴ D. Boliger, Interrogative Structure of American English «Publication of the American Dialect Society», N 28, Nov. 1957,

դեպքում ստորոգյալի լրացումը (ինչպես երևում է բերված օրինակից), որպես կանոն, տեղափոխվում է ստորոգյալից առաջ: Հարցումը հավաստիական է, երբ խոսողը մեծ հավանականությամբ ենթադրում է իր հարցման պատասխանը (Նրեխաները տակավին չե՞նք քնած): Հավաստիական են հատկապես այն հարցումները, որոնք պարունակում են տակավին, արդեն, ուրեմն, մինչև հիմա և նման տիպի բառեր:

Հնտրանբային հարցումը (իննում է երկու տևակ՝ բազմեզր, երբ հարցման մեջ հանդես են գալիս երկու և ավելի եզրեր (Քաղա՞քը կապրիս, թե՞ գյուղը), և երկեզր, երբ հարցման մեջ հանդես են գալիս միայն երկու եզր: Այս կառուցվածքում որպես երկրորդ եզր հանդես է գալիս միայն ոչ դատարկ բառը (Պիտի աշխատի՞ս, թե՞ (կամ) ոչ):

Համեմատական հարցման միջոցով խոսողն իր կարծիքն է հայտնում հարցման մեջ համեմատվող եզրերի նկատմամբ՝ որին առավելություն տալ և որին՝ չտալ (Նախընտրելի չե՞ մնալը, քան թե գնալը):

Լրացուցիչ հարցումը կազմում է նախօրոք ասված հարցման կամ ոչ հարցման շարունակությունը և լրացնում է այն: Սա նույնպես բաժանվում է երկու ենթատեսակի՝ ստորոգյալով հարցման (Ամբողջ օրը պիտի աշխատիս— Այո:— Հաբա պիտի շահագստանա՞ս) և ոչ ստորոգյալով հարցման (Վարդանը եկե՞ր է:— Եկեր է:— Հաբա Սուրե՞նը):

Կցորդային հարցմամբ խոսողը արտահայտում է իր կարծիքը որևէ իրողության կամ փաստի մասին և կամենում է, որպեսզի խոսակիցը հաստատի հարցման առաջին շարույթում արտահայտված միտքը (Ազդոր տիկին է, չե՞):

Նշված հարցատեսակների մեջ շատ կարևոր տեղ ունեն այդ-ոչ հարցումները, որոնք հատկապես առաջնային նշանակություն են ստանում հաղորդակցման ժամանակ և արտասանվում են ուրույն հնչերանգով: Այս առումով արևմտահայերենի այդ-ոչ հարցման հնչերանգի հետազոտությունը խիստ կարևոր է: Հնչերանգի վերաբերյալ փորձառական ուսումնասիրություններ են կատարել ինչպես արտասահմանյան, այնպես էլ խորհրդային շատ լեզվաբաններ:

Ուսումնասիրությունը կատարել են փորձառական եղանակով՝ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի փորձառական հնչյունաբանության փորձասրահում: Ձայնագրել ենք 18—20 տարեկան երեք բնյութահայերի, որոնք բոլորն էլ տարրական և միջնակարգ կրթությունը ըստ-տացել են հայկական վարժարաններում՝ գրական արևմտահայերենով: Ձայնագրել և ուսումնասիրել ենք հետևյալ հնչադասությունները. Անցա՞ր գետը, Երկա՞ր պատմեց, Ուշացա՞ծ ճամփօրդ նս, Երկա՞ր օրեր անցան, Սարսա՞փ անցավ ֆաղաֆով, Հասա՞վ Թասենի դաշտ, Սպիրոա՞կ մագեր ունիս, Գեղեցի՞կ կին էր Սոսեն, Երկա՞ր ճամբայ անցաւ, Հայաստա՞ն պիտի երբաս, Ապա՞ծ իրարու ճայեցաք, Կրնա՞մ այդ ալպամբ տեսնել, Օտա՞ր ֆանդակ է, Աշո՞տք ֆանդած է, Արա՞ն մոմեր է: Կատարել ենք ձայնագրված հնչադասությունների անհրաժեշտ լսողական վերլուծություն:

Հետազոտության ընթացքում առանձնակի ուշադրություն ենք դարձնում հիմնական տոնի հաճախականության, միջուկի, ետմիջուկի և նախամիջուկի տոնալ կառուցվածքների վրա: Միջուկի է կողմում հնչադասության զբխավոր շեշտ կրող վանկը, նախամիջուկ՝ միջուկին նախորդող վանկը, ետմիջուկ՝ միջուկին հաջորդող վանկը: Հնչերանգը հատկապես ուսումնասիրում ենք ըստ որոշակի հարաբերական ձայնաբանական հատկությունների, որոնք ստացվում են ձայնի հաճախականության, ուժգնության և տևողության բացարձակ արժեքներից. այնպիսիք, ինչպես՝ հընչադասության հաճախականության ձայնածավալը, ետմիջուկային վանկի հաճախականության նվազման ձայնածավալը, հնչադասության առավելագույն ուժգնությունը, հնչադասության վանկի միջին տևողությունը և այլն⁵: Ուսումնասիրության ժամանակ կարևոր տեղ է տրվում նաև յուրաքանչյուր հաղորդավարի ձայնի հաճախականությունների միջակայքին, որն անվանում ենք ձայնասանձան:

Այժմ մանրամասն ուսումնասիրենք երեք հնչադասությունների հնչերանգները, ապա անցնենք ուսումնասիրված բոլոր հնչադասությունների տվյալների քննությանն ու վերջնական եզրակացություններին:

⁵ D. Bolinger. A Theory of Pitch Accent in English, «Word», vol. 14, 1958, Intonation and its Parts, Stanford University Press, Stanford, 1986; Ph. Liberman, On the Acoustic Basis of the Perception of Intonation by Linguists, «Word», vol. 21, 1963, Leh'ste I., Suprasegmentals, Cambridge Massachusetts and London, 1970; D. Crystal, Prosodic Systems and Intonation in English, Cambridge, 1969; P. К. Потапова и Л. П. Блохина, Просодические характеристики речи, М., 1970; А. А. Меллук, Интонация альтернативного вопроса в английском языке, канд. дис., М., 1968.

⁶ Թե ինչպես են որոշվում համապատասխան ձայնաբանական հատկությունները, տե՛ս Ս. Ղուկասյան, Հարցական նախադասությունների հնչերանգը, «Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում» ժողովածու, Երևան, 1978, էջ 82:

Չմոռանա՞ք ասել, որ այդ-ուչ հարցման դեպքում տառչին հաղորդավարի ձայնասահմանը գտնվում է 100—200 հց միջակայքում, որը կազմում է 12 կիսատոն, երկրորդինը՝ 130—300 հց, որը կազմում է 15 կիսատոն, երրորդինը՝ 100—280 հց, որը կազմում է 18 կիսատոն, սակայն ոչ մի հնչադասություն չունենք, որի հաճախականության նվազման աստիճանը լինի 100 հց, իսկ առավելագույնը՝ 280 հց. միայն մեկ հնչադասության դեպքում է (Աշոտը քանդած է), ուր առավելագույն հաճախականությունը 280 հց է, իսկ նվազագույնը՝ 110 հց, այսինքն՝ նշված հնչադասության մեջ հաղորդավարի ձայնասահմանը 16 կիսատոն է. 100 հց նվազագույն հաճախականություն ունենք «Կրնա՞մ այդ այլու՞մ տեսնել» հնչադասությունում, ուր առավելագույն հաճախականությունը 240 հց է, այսինքն՝ նշված հնչադասությունում հաղորդավարի ձայնասահմանը 15 կիսատոն է:

1. Անցա՞ր գետը: Այս հնչադասության հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը առաջին հաղորդավարի դեպքում իջնող-բարձրացող-իջնող է, երկրորդինը՝ բարձրացող-իջնող, երրորդինը՝ հավասար-բարձրացող-իջնող:

Հիմնական տոնի շարժումը «Անցա՞ր գետը» հնչադասությունում: «Անցա՞ր գետը» հարցման նախամիջուկում առաջին հաղորդավարի տոնի շարժումը իջնող է, երկրորդինը՝ բարձրացող, երրորդինը՝ հավասար. միջուկում՝ երեքի դեպքում էլ բարձրացող է. ետմիջուկում առաջին հաղորդավարինը՝ բարձրացող-իջնող է, երկրորդինը՝ իջնող, երրորդինը՝ բարձրացող:

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հարցման սկզբում 110 հց է, երկրորդինը՝ 140 հց, երրորդինը՝ 120 հց: Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 9 կիսատոն է, երկրորդինը՝ 15 կիսատոն, երրորդինը՝ 13 կիսատոն: Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության անման ձայնածավալը 8 կիսատոն է, երկրորդինը՝ 6 երրորդինը՝ 11 կիսատոն: Առաջին հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության ձայնածավալը +1 և -1 կիսատոն է, երկրորդինը՝ -1 կիսատոն, երրորդինը՝ +1 կիսատոն: Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը -8 կիսատոն է, երկրորդինը և երրորդինը՝ -13 կիսատոն: Առաջին և երրորդ հաղորդավարների առավելագույն հաճախականությունը տեղայնանում է երրորդ (գե-) վանկում, իսկ երկրորդինը՝ միջուկում (-ցա՞ր): Նվազագույն հաճախականությունը միշտ տեղայնանում է վերջին վանկում (-ա՞ր):

Առաջին և երկրորդ հաղորդավարների հնչադասության առավելագույն ուժգնությունը 35 դբ է, երրորդինը՝ 34 դբ: Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 5 դբ է, երկրորդինը՝ 6 դբ, երրորդինը՝ 4 դբ: Հնչադասության առավելագույն ուժգնությունը երեք հաղորդավարների դեպքում էլ տեղայնանում է միջուկում, իսկ նվազագույնը՝ առաջին երկուսի դեպքում՝ երրորդ վանկում (դե-), երրորդի դեպքում՝ առաջին վանկում (ա՞ն-):

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 830 մվրկ է, երկրորդինը՝ 800 մվրկ, երրորդինը՝ 770 մվրկ: Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 208 մվրկ է, երկրորդինը՝ 200 մվրկ, երրորդինը՝ 193 մվրկ: Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 250 մվրկ է, երկրորդինը՝ 270 մվրկ, երրորդինը՝ 220 մվրկ: Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 1,2 է, երկրորդինը՝ 1,4, երրորդինը՝ 1,1:

2. Ուշացա՞ծ ճամփուղ ես: Այս հարցման հիմնական տոնի շարժման ուղղությունը առաջին հաղորդավարի դեպքում բարձրացող-հավասար-բարձրացող-իջնող է, երկրորդի դեպքում՝ բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող, երրորդի դեպքում՝ իջնող-բարձրացող-իջնող:

Հիմնական տոնի շարժումը «Ուշացա՞ծ ճամփուղ ես» հնչադասությունում: Նախամիջուկում առաջին հաղորդավարի տոնի շարժումը հավասար է, երկրորդինը՝ բարձրացող-իջնող, երրորդինը՝ իջնող. միջուկում այն միշտ բարձրացող է. ետմիջուկում՝ իջնող:

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հնչադասության սկզբում 90 հց է, երկրորդինը՝ 130 հց, երրորդինը՝ 150 հց: Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 9 կիսատոն է, երկրորդինը և երրորդինը՝ 11 կիսատոն: Առաջին և երկրորդ հաղորդավարների միջուկի հաճախականության անման ձայնածավալը 9 կիսատոն է, երրորդինը՝ 6 կիսատոն: Ետմիջուկային վանկի հաճախականության ձայնածավալը երեքի դեպքում էլ -2 կիսատոն է: Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը -8 կիսատոն է, երկրորդինը՝ -9 կիսատոն, երրորդինը՝ -6 կիսատոն:

Առաջին և երկրորդ հաղորդավարների հնչադասության առավելագույն ուժգնությունը 34 դբ է, երրորդինը՝ 31 դբ: Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 14 դբ է, երկրորդինը՝ 9 դբ, երրորդինը՝ 16 դբ: Առաջին և երկրորդ հաղորդավարների հնչադասության առավելագույն ուժգնությունը տեղայնանում է միջուկում (-ցած), երրորդինը՝ երկրորդ վանկում (-շա), իսկ նվազագույնը՝ միշտ տեղայնանում է առաջին (ու-) վանկում:

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 1320 մվրկ է, երկրորդինը՝ 1240 մվրկ, երրորդինը՝ 1220 մվրկ: Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 218 մվրկ է, երկրորդինը՝ 207 մվրկ, երրորդինը՝ 203 մվրկ: Առաջին և երկրորդ հաղորդավարների միջուկային վանկի տևողությունը 270 մվրկ է, երրորդինը՝ 250 մվրկ: Առաջին և երրորդ հաղորդավարների ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 1,2 է, երկրորդինը՝ 1,3:

3. Երկա՞ր օրե՞ր անցան: Այս հնչադասության հիմնական տոնի շարժման ուղղությունը առաջին հաղորդավարի դեպքում հավասար-բարձրացող-իջնող-հավասար-իջնող է, երկրորդի դեպքում՝ հավասար-բարձրացող-հավասար-իջնող, երրորդի դեպքում՝ հավասար-բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող:

Հիմնական տոնի շարժումը «Երկա՞ր օրե՞ր անցան» ենչադասությունում: Նախամիջուկում՝ միշտ բարձրացող, ետմիջուկում՝ առաջին և երրորդ հաղորդավարների դեպքում՝ իջնող, երկրորդի դեպքում՝ հավասար:

Առաջին հաղորդավարի հաճախականության մակարդակը հնչադասության սկզբում 100 հց է, երկրորդինը՝ 150 հց, երրորդինը՝ 130 հց: Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը 10 կիսատոն է, երկրորդինը՝ 12 կիսատոն, երրորդինը՝ 15 կիսատոն: Միջուկի հաճախականության աճման ձայնածավալը երեք հաղորդավարների դեպքում էլ 10 կիսատոն է: Առաջին հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության ձայնածավալը — 2 կիսատոն է, երկրորդինը՝ 0, երրորդինը՝ —1 կիսատոն: Առաջին հաղորդավարի հընչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը — 7 կիսատոն է, երկրորդինը և երրորդինը՝ — 9 կիսատոն: Հնչադասության առավելագույն հաճախականությունը երեքի դեպքում էլ տեղայնանում է միջուկում (կար), իսկ նվազագույնը առաջինի դեպքում տեղայնանում է առաջին վանկում (կար-), երկրորդի և երրորդի դեպքում՝ վերջին վանկում (ցան):

Առաջին հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը 31 դբ է, երկրորդինը՝ 37 դբ, երրորդինը՝ 36 դբ: Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը 8 դբ է, երկրորդինը՝ 3 դբ, երրորդինը՝ 6 դբ: Հնչադասության առավելագույն ուժգնությունը առաջին հաղորդավարի դեպքում տեղայնանում է միջուկում (կար-), երկրորդի և երրորդի դեպքում՝ ետմիջուկում (0-), իսկ նվազագույնը՝ միշտ տեղայնանում է վերջին վանկում (ցան):

Առաջին հաղորդավարի ողջ հնչադասության տևողությունը 1230 մվրկ է, երկրորդինը՝ 1070 մվրկ, երրորդինը՝ 1050 մվրկ: Առաջին հաղորդավարի հնչադասության վանկի միջին տևողությունը 200 մվրկ է, երկրորդինը՝ 178 մվրկ, երրորդինը՝ 175 մվրկ: Առաջին հաղորդավարի միջուկային վանկի տևողությունը 300 մվրկ է, երկրորդինը՝ 220 մվրկ, երրորդինը՝ 200 մվրկ: Առաջին հաղորդավարի ՄՎՏ հարաբերությունը ՎՄՏ 1,5 է, երկրորդինը՝ 1,2, երրորդինը՝ 1,1:

Հիմնական տոնի շարժման ուղղությունը: Դիտարկումները ցույց են տալիս, որ արևմտահայերենում հիմնական տոնի հաճախականության շարժման ուղղությունը մեծ մասամբ բարձրացող-իջնող է, սակայն տոնը հաճախ մի շարք վանկերում շարժվում է նաև հավասար, որը առաջացնում է զգալի տարատեսակություններ: Այսպիսով, ուսումնասիրված նյութում տոնի շարժումը ունի հետևյալ տեսքը (փակագծում համապատասխան տարբերակից բերում ենք մեկ օրինակ).

1. բարձրացող-իջնող (Շա՞տ երկա՞ր կարգաց, 2-րդ հաղ.),
2. հավասար-բարձրացող-իջնող (Օտա՞ր քանդակ է, 2-րդ հաղ.),
3. հավասար-բարձրացող-իջնող-հավասար-իջնող (Երկա՞ր ճամփայ անցաւ, 1-ին հաղ.),
4. իջնող-բարձրացող-իջնող (Ուշացա՞ծ ճամփորդ ես, 3-րդ հաղ.),
5. բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող (Ապշա՞ծ իրարու նայեցաք, 2-րդ հաղ.),
6. հավասար-բարձրացող-հավասար-իջնող (Արա՞ն մոմիւր է, 1-ին հաղ.),
7. բարձրացող-հավասար-բարձրացող-իջնող (Ուշացա՞ծ ճամփորդ ես, 1-ին հաղ.),
8. իջնող-հավասար-բարձրացող-հավասար-իջնող (Սպիտա՞կ մազեր ունիս, 3-րդ հաղ.),
9. բարձրացող-հավասար-իջնող (Աշո՞տը քանդած է, 3-րդ հաղ.),
10. բարձրացող-հավասար-բարձրացող-իջնող-հավասար-իջնող (Հայաստա՞ն պիտի երթաս, 2-րդ հաղ.),
11. հավասար-բարձրացող-հավասար-իջնող (Ապշա՞ծ իրարու նայեցաք, 1-ին հաղ.),
12. հավասար-բարձրացող-հավասար-իջնող-հավասար-իջնող (Կրեա՞մ այդ ալպտը տեսնել, 3-րդ հաղ.),
13. հավասար-բարձրացող-իջնող-բարձրացող-իջնող (Երկա՞ր օրեր անցան, 3-րդ հաղ.),
14. հավասար-բարձրացող-իջնող-հավասար-բարձրացող-իջնող (Սարսա՞փ անցաւ քաղաքով, 3-րդ հաղ.),
15. իջնող-բարձրացող-իջնող-հավասար-իջնող-հավասար-իջնող (Սարսա՞փ անցաւ քաղաքով, 3-րդ հաղ.),
16. հավասար-բարձրացող-հավասար-բարձրացող-հավասար-իջնող (Աշո՞տը քանդած է, 1-ին հաղ.):

Նշված դեպքերից բոլորից հաճախ հանդիպում է 1-ինը (8 անգամ), այսինքն՝ երբ տոնի շարժման ուղղությունը բարձրացող-իջնող է, այնուհետև 2-րդը (7 անգամ)՝ տոնի շարժումը հավասար-բարձրացող-իջնող է: Մյուս տեսակներից հանդիպում է 1—3 օրինակ, երեք դեպք էլ ունենք, երբ հարցումը սկսում է իջնող տոնով՝ 4-րդը, 8-րդը և 15-րդը:

Հնչադասության հաճախականության ձայնածավալը: Առաջին հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 8—12 կիսատոն աճմաններում, այսինքն՝

նվազագույն մեծությունը 8 կիսատոն է (Ալշա՞ծ իրարու նայեցաք), իսկ առավելագույնը՝ 12 կիսատոն (Կրնա՞մ այդ ալլսմը տեսնել): Այն ավելի հաճախ փոփոխվում է 9—10 կիսատոն սահմաններում:

Երկրորդ հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 10—15 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 10 կիսատոն է (Շա՞տ երկար կարդաց), իսկ առավելագույնը՝ 15 կիսատոն (Անցա՞ր գետը): Այն հիմնականում փոփոխվում է 11—13 կիսատոն սահմաններում:

Երրորդ հաղորդավարի հնչադասության հաճախականության ձայնածավալը փոփոխվում է 10—16 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 10 կիսատոն է (Երկա՞ր պատմեց), իսկ առավելագույնը՝ 16 կիսատոն (Աշո՞տը քանդած է): Այն հիմնականում փոփոխվում է 11—13 կիսատոն սահմաններում:

Հանախականության մակարդակը հնչադասության սկզբում: Առաջին հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 90—110 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 90 հց է (Ուշացա՞ծ ճամփորդ ես), իսկ առավելագույնը՝ 110 հց (Անցա՞ր գետը): Այն մեծ մասամբ ընդունում է 100 հց արժեքը:

Երկրորդ հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 130—170 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 130 հց է (Երկա՞ր ճամփայ անցաւ), իսկ առավելագույնը՝ 170 հց (Սարսա՞փ անցաւ քաղաքով): Այն հիմնականում փոփոխվում է 130—140 հց սահմաններում:

Երրորդ հաղորդավարի հնչադասության սկզբի հաճախականության մակարդակը փոփոխվում է 120—150 հց սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 120 հց է (Օտա՞ր քանդակ է), իսկ առավելագույնը՝ 150 հց (Սպիտա՞կ մազեր ունիս): Այն հիմնականում փոփոխվում է 130—140 հց սահմաններում:

Միջուկի հանախականության անման ձայնածավալը: Առաջին հաղորդավարի միջուկի հաճախականության անման ձայնածավալը փոփոխվում է 7—12 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 7 կիսատոն է (Աշո՞տը քանդած է), իսկ առավելագույնը՝ 12 կիսատոն (Կրնա՞մ այդ ալլսմը տեսնել): Այն հիմնականում փոփոխվում է 9—10 կիսատոն սահմաններում:

Երկրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության անման ձայնածավալը փոփոխվում է 5—11 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 5 կիսատոն է (Շա՞տ երկար կարդաց), իսկ առավելագույնը՝ 11 կիսատոն (Անցա՞ր գետը): Այն հիմնականում փոփոխվում է 9—10 կիսատոն սահմաններում:

Երրորդ հաղորդավարի միջուկի հաճախականության անման ձայնածավալը փոփոխվում է 6—11 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 6 կիսատոն է (Ուշացա՞ծ ճամփորդ ես), իսկ առավելագույնը՝ 11 կիսատոն (Երկա՞ր պատմեց): Այն հիմնականում փոփոխվում է 9—10 կիսատոն սահմաններում:

Ետմիջուկային վանկի հանախականության ձայնածավալը: Առաջին հաղորդավարի ետմիջուկային վանկի ձայնածավալը փոփոխվում է —5—+2 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —5 կիսատոն է (Սարսա՞փ անցաւ քաղաքով), իսկ առավելագույնը՝ +2 կիսատոն (Օտա՞ր քանդակ է): Այն հիմնականում փոփոխվում է —2—0 կիսատոն սահմաններում:

Երկրորդ հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է —3—0 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —3 կիսատոն է (Սպիտա՞կ մազեր ունիս), իսկ առավելագույնը՝ 0 (Աշո՞տը քանդած է): Այն հիմնականում փոփոխվում է —2—-1 կիսատոն սահմաններում:

Երրորդ հաղորդավարի ետմիջուկային վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է —4—-2 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —4 կիսատոն է (Աշո՞տը քանդած է), իսկ առավելագույնը՝ —2 կիսատոն (Երկա՞ր պատմեց): Այն հիմնականում փոփոխվում է —1—0 կիսատոն սահմաններում:

Չհնչադասության վերջին վանկի հանախականության ձայնածավալը: Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է —12—-4 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —12 կիսատոն է (Օտա՞ր քանդակ է), իսկ առավելագույնը՝ —4 կիսատոն (Երկա՞ր պատմեց): Այն հիմնականում փոփոխվում է —8—-7 կիսատոն սահմաններում:

Երկրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է —13—-6 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —13 կիսատոն է (Անցա՞ր գետը), իսկ առավելագույնը՝ —6 կիսատոն է (Երկա՞ր պատմեց): Այն մեծ մասամբ փոփոխվում է —9—-7 կիսատոն սահմաններում:

Երրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է —14—-4 կիսատոն սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը —14

կիսատոն է (Օտա^ր քանդակ է), իսկ առավելագույնը՝ —4 կիսատոն (Երկա^ր պատմեց): Այն հիմնականում փոփոխվում է —9—7 կիսատոն սահմաններում:

Նշադասության առավելագույն ուժգնությունը: Առաջին հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 32—37 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 32 դր է (Արա^ն մոմեր է), իսկ առավելագույնը՝ 37 դր (Երկա^ր օրեր անցան): Այն հիմնականում փոփոխվում է 32—35 դր սահմաններում:

Երկրորդ հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 32—36 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 32 դր է (Սպիտա^կ մազեր ունիս), իսկ առավելագույնը՝ 36 դր (Օտա^ր քանդակ է): Այն հիմնականում փոփոխվում է 32—35 դր սահմաններում:

Երրորդ հաղորդավարի հնչադասության առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 33—36 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 33 դր է (Ուշացա^ծ ճամփորդ ես), իսկ առավելագույնը՝ 36 դր (Շա^տ երկար կարդաց): Այն հիմնականում փոփոխվում է 33—35 դր սահմաններում:

Նշադասության ուժգնության ձայնածավալը: Առաջին հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 4—11 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 4 դր է (Աշ^տ քանդած է), իսկ առավելագույնը՝ 11 դր (Ապշա^ծ իրարու նայեցաք): Այն հիմնականում փոփոխվում է 5—7 դր սահմաններում:

Երկրորդ հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 2—10 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 2 դր է (Երկա^ր պատմեց), իսկ առավելագույնը՝ 10 դր (Ուշացա^ծ ճամփորդ ես): Այն հիմնականում փոփոխվում է 5—7 դր սահմաններում:

Երրորդ հաղորդավարի հնչադասության ուժգնության ձայնածավալը փոփոխվում է 3—12 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 3 դր է (Արա^ն մոմեր է), իսկ առավելագույնը՝ 12 դր (Սպիտա^կ մազեր ունիս): Այն հիմնականում փոփոխվում է 6—8 դր սահմաններում:

Նշադասության վերջին վանկի առավելագույն ուժգնությունը: Առաջին հաղորդավարի հնչադասության վերջին վանկի առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 28—32 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 28 դր է (Սպիտա^կ մազեր ունիս), իսկ առավելագույնը՝ 32 դր (Ապշա^ծ իրարու նայեցաք): Այն հիմնականում փոփոխվում է 29—31 դր սահմաններում:

Երկրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 27—34 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 27 դր է (Սպիտա^կ մազեր ունիս), իսկ առավելագույնը՝ 34 դր (Երկա^ր պատմեց): Այն հիմնականում փոփոխվում է 30—32 դր սահմաններում:

Երրորդ հաղորդավարի հնչադասության վերջին վանկի առավելագույն ուժգնությունը փոփոխվում է 26—34 դր սահմաններում, այսինքն՝ նվազագույն մեծությունը 26 դր է (Ապշա^ծ իրարու նայեցաք), իսկ առավելագույնը՝ 34 դր (Անցա^ր գետը): Այն հիմնականում փոփոխվում է 30—32 դր սահմաններում:

Եզրակացություններ

1. Այո-ոչ հարցման հիմնական տոնի շարժման ուղղությունը արևմտահայերենում մեծ մասամբ բարձրացող-իջնող է: Այն կարող է լինել նաև հավասար-բարձրացող-իջնող և հավասար-բարձրացող-իջնող-հավասար-իջնող, սակայն վերջին երկու տարբերակները շատ հազվադեպ են հանդիպում: Արևմտահայերենում տոնի շարժումը միջուկից հետո կտրուկ չի նվազում, ինչպես կատարվում է արևելահայերենում, այլ միջուկին հաջորդող վանկերում աստիճանաբար քիչ-քիչ նվազում է և կտրուկ վայրէջք կատարում վերջին վանկում:

2. Միջուկում տոնը միշտ կտրուկ աճում է՝ միջինը 9—11 կիսատոնի սահմաններում: Ետ-միջուկում տոնը համարյա չի փոփոխվում և մնում է նույն բարձրության վրա:

3. Նշադասության հաճախականության ձայնածավալը բարձր ձայնաառձայն ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է միջինը 11—13 կիսատոն սահմաններում, իսկ ցածր ձայնաառձայն ունեցողների դեպքում՝ 9—10:

4. Նշադասության սկզբի հաճախականության մակարդակը բարձր ձայնաառձայն ունեցող հաղորդավարների դեպքում փոփոխվում է միջինը 130—140 հց սահմաններում, իսկ ցածր ձայնաառձայն ունեցողների դեպքում՝ 80—100:

5. Ետմիջուկային վանկի հաճախականության ձայնածավալը փոփոխվում է միջինը —2—0 կիսատոն սահմաններում:

6. Նշադասության վերջին վանկի հաճախականության ձայնածավալը նույնպես նվազող է և փոփոխվում է միջինը —9—7 կիսատոն սահմաններում:

7. Հնչադասութիան առավելագույն ուժգնութիւնը փոփոխվում է միջինը 32—35 դր սահմաններում:

8. Հնչադասութիան ուժգնութիան ձայնածավալը փոփոխվում է միջինը 5—8 դր սահմաններում:

9. Հնչադասութիան վերջին վանկի առավելագույն ուժգնութիւնը փոփոխվում է միջինը 29—32 դր սահմաններում:

Որպես ընդհանուր եզրակացութիւն, կարող ենք ասել, որ արևմտահայերենի այո-ոչ հարցման հնչերանգը արևելահայերենի հետ համեմատած լարված է, որն ունի հոգերանական նախահիմքեր և պայմանավորված է արևմտահայութիան հասարակական, քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակով: Արևմտահայութիան շատ ավելի անհանդիստ կյանքը արտահայտվել է նրանց հոգեկան աշխարհում, որն էլ իր հերթին դրսևորվել է նրանց հնչերանգի մեջ, որովհետև մարդու հոգեկան աշխարհում կատարվող ամեն մի տեղաշարժ անմիջականորեն արտացոլվում է նրա ձայնի մեջ: Թերևս ծագումնաբանական և լեզվական մյուս գործոնները մեկտեղ հաշվի առնելով նույնը կարելի է ասել նաև լեզվի մյուս մակարդակների միավորների մասին:

С. В. ГУКАСЯН—Попытки исследования интонации вопроса да-нет в западно-армянском.—На основе изучения вопросительных фраз, требующих ответа да-нет в западноармянском варианте литературного армянского языка, экспериментальным методом были определены акустические характеристики этих фраз—такие, как частотный диапазон фразы, ядра, диапазон интенсивности всей фразы, длительность всей фразы и т. д. Основные выводы сводятся к следующему: 1. в каждой фразе выделяется один слог-ядро, характеризующийся резким повышением тона, который после ядерного слога постепенно понижается и резко падает на последнем слоге; 2. вопросительные фразы да-нет в основном характеризуются резким повышенным тоном в ядерном слоге и понижением в конце; 3. акустически ядро выделяется изменением частоты основного тона и интенсивности по сравнению с предъядерными и заядерными слогами; 4. в ядерном слоге тон сразу повышается в среднем на 9—11 полутонов; 5. частотный диапазон фразы у дикторов, имеющих высокий голос, изменяется в пределах 11—13 полутонов, а у дикторов, имеющих низкий голос,—9—10.